


## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Մայիսի 3-ին, կիրակի.—Աշխարհամատրան (Կանաչ Կիրակէ).**

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Նարեկ քհն. Մատարյանը:

*
* *

**Մայիսի 6-ին, չորեքշաբթի.**—Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ Տ. Դավիթ եպս. Սահակյանի և Արգենտինայի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Կենտրոնական Վարչության խնդրանքին, բարեհաճել էր Մայր Աթոռի երիտասարդ միաբան Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանին ուղարկել Բուենոս-Այրես՝ հովվական գործով, ծառայելու համար այդ թեմում:

Այսօր Տ. Գրիգորիս վարդապետը մեկնեց Մոսկվա՝ ուղևորվելու համար Բուենոս Այրես:

*
* *

**Մայիսի 7-ին, հինգշաբթի.**—Այսօր հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում «Հայ Եկեղեցու առաքելական ծագումը» թեմայի շուրջ զեկուցումով հանդես է գալիս Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, պատմական գիտությունների թեկնածու պրն. Հայկ Մելքոնյանը:

Զեկուցման ավարտին հարգելի դասախոսը պատասխանում է ներկաների տված մի շարք հարցերին:

*
* *

**Մայիսի 10-ին, կիրակի.—(Կարմիր Կիրակէ).**

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Արիւն մարտիրոսաց հիմն Եկեղեցւոյ» բնաբանով:

*
* *

**Մայիսի 15-ին, ուրբաթ.**—Այսօր հոգևոր ճեմարանի դահլիճում իր երկրորդ դասախոսությունն է կարդում պրն. Հայկ Մելքոնյանը՝ «Հայ Եկեղեցու ինքնուրույնությունը և Կեսարիայի Աթոռը» թեմայով:

*
* *

**Մայիսի 16-ին, շաբաթ.**—Այսօր, առավոտյան, հոգևոր ճեմարանի ուսանողները և դասախոսական կազմը միօրյա արշավի են մեկնում դեպի Գառնի-Գեղարդ, այցելում նաև Հավուց Թառ վանք և Ս. Ստեփանոս եկեղեցի:

*
* *

**Մայիսի 17-ին, կիրակի.—Տօն Երևման Ս. Խաչի.**

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Անանիա վրդ. Արաքաջյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում օրվա տոնի նշանակության մասին:

*
* *

**Մայիսի 21-ին, հինգշաբթի.**—Այսօր, երեկոյան, ճեմարանի դահլիճում իր երրորդ դասախոսությունն է կարդում պրն. Հայկ Մելքոնյանը:

Դասախոսության թեման էր՝ «Հայ և օտար եկեղեցական հարաբերությունները Ե—Զ դդ.»:

*
* *

**Մայիսի 24-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ստեփանոս աբեղա Չաքալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ընդ իս եթէ ոք մտանիցէ՝ կեցցէ» (Հովհ. Ժ 10) բնաբանով:

*
* *

**Մայիսի 25-ին, երկուշաբթի.**—Այսօրվանից Էջմիածնի հոգևոր ճեմարանում սկսվում են 1980—81 ուսումնական տարվա տարեվերջի գրավոր և բանավոր քննությունները, որոնք կշարունակվեն մինչև հաջորդ ամսվա կեսերը:

*
* *

**Մայիսի 26-ին, երեքշաբթի.**—Այսօր, ի գլուխ Սիդնեյի Հայ Եկեղեցու «Երիտասարդաց Մարմնի» 12 երկսեռ անդամների, ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Ավստրալիայի և Նոր Զելանդիայի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Աղան ծ. վրդ. Բալիոզյանը:

*
* *

**Մայիսի 28-ին, հինգշաբթի.—Համբարձումն Քրիստոսի.**

Այսօր, օրվա մեծ տոնի առթիվ, Մայր Աթոռում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում օրվա մեծ տոնի հոգևոր-կրոնական նշանակության մասին:

Պատարագից հետո կատարվում է մաղթանք 1441 թ. Հայրապետական Աթոռի Սսից Սուրբ Էջմիածին փոխադրության պատմական տարեդարձի առթիվ:

*
* *

**Մայիսի 31-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» (Առակ. Ա 2) բնաբանով:

**Հունիսի 8-ին, երկուշաբթի.**—Հունիսի 8—12 օրերին Կիևում գումարվում է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի անդամ ուղղափառ Եկեղեցիների խորհրդակցական ժողով, որին մասնակցում են հույն Օրթոդոքս, ռուս Պրավոսլավ և արևելյան հնագույն Եկեղեցիների, այդ թվում նաև Հայ Եկեղեցու ներկայացուցիչները:

Սույն խորհրդակցական ժողովին մասնակցում էր նաև Մայր Աթոռի կողմից Տ. Անանիա վրդ. Արաքաջյանը:

Ժողովի հիմնական նպատակն է եղել նախապատրաստությունը ուղղափառ Եկեղեցիների 1982 թ. գումարվելիք ավելի մեծ խորհրդակցությանը՝ մասնակցելու համար 1983 թ. Վանկուվերում (Կանադա) կայանալիք Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հերթական համագումարին:

*
* *

**Հունիսի 11-ին, հինգշաբթի.**—Այսօր Գերագույն հոգևոր խորհուրդը Վեհարանում կազմակերպել էր հանդիպում Վեհափառ Հայրապետի հետ, Նրա վերջերս արտասահման կատարած ուղևորությունից Մայր Աթոռ վերադարձի առիթով:

Երեկոյան ժամը 17-ին Մայր տաճարում տեղի է ունենում հանդիսավոր ժամերգություն՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

Ժամերգությանը ներկա էին Մայր Աթոռի ողջ միաբանությունը, Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Ս. Շողակաթ և Ս. Աստվածածին եկեղեցիների քահանայից դասը, Արարատյան թեմի հոգևորականության ներկայացուցիչները, Ս. Գեղարդ վանքի միաբանները: Ժամերգության ավարտին Հոգեգալստյան տոնի հոգևոր նշանակության մասին քարոզ է խոսում Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդի օգնական Տ. Գարեգին աբղ. Ներսիսյանը:

Այնուհետև, ժամերգությունից հետո, տեղի է ունենում հիշյալ հանդիպումը Վեհափառ Հայրապետի հետ: Նախ բացման խոսքով հանդես է գալիս Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, այնուհետև Տ. Զատիկ աբղ. Ավետիքյանը ամփոփ և ժամանակագրական ձևով ներկայացնում է ուղևորության նկարագրությունը:

10 րոպե ընդմիջումից հետո, հավաքույթի երկրորդ մասում, Վեհափառ Հայրապետը պատմում է դեպի Եվրոպա կատարած Իր վերջին այցելության տպավորություններին, այցելած երկրների հայ համայնքների եկեղեցական, ազգային, մշակութային կյանքի, քույր Եկեղեցիների հոգևոր պետերի և պետական բարձրաստիճան ներկայացուցիչների հետ Իր հանդիպումների մասին:

Հայոց Հայրապետի հետ սույն հանդիպմանը ներկա էին Գերագույն հոգևոր խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Մայր Աթոռի ողջ միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսները, մայրավանքի ղեկավար պաշտոնեությունը, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի անդամները, բազմաթիվ մտավորականներ, արվեստագետներ և այլ հյուրեր:

Վեհափառ Հայրապետի հետ հանդիպումը անցնում է ջերմ ու արտագին մթնոլորտում, և Նրա հաղորդումը լսվում է հոգեկան մեծ բավականությամբ:

*
* *

**Հունիսի 12-ին, ուրբաթ.**—Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի ուսանողությունը մեկնում է 3-օրյա ավանդական պտույտի, դեպի պատմական վանքերն ու եկեղեցիները, հանրապետության տեսարժան վայրերը:

Այս տարի, ըստ կազմված ծրագրի, ուսանողությունը մեկնում է դեպի Վայոց ձոր՝ Եղեգնաձորի շրջան, այցելում Նորավանք, Ցախաց քար, Ալայազի Ս. Նշան եկեղեցի, Թանահատի վանք, Սմբատի բերդ, Գնդեվանք և այլ հիշարժան վայրեր ու պատմական հուշարձաններ:

Ուսանողությունը ճեմարան է վերադառնում անմոռանալի տպավորություններով և հայրենական քաղցր հուշերով:

*
* *

**Նույն օրը,** երեկոյան, ուխտավորաբար Մայր Աթոռ են ժամանում Նյու Յորքի հայ երիտասարդաց կազմակերպության 17 երկսեռ անդամներ՝ Վեստ-Չեստր եկեղեցական նոր համայնքի Ս. Հակոբ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Գարեգին քհն. Գասպարյանի գլխավորությամբ:

Երիտասարդները, որպես Մայր Աթոռի հյուրեր, հյուրընկալվում են «Հայկաշէն» ամառանոցում:

Խումբը միաժամանակ մասնակցում է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի կազմակերպած հայ գրականության, հայ ժողովրդի պատմության, երգի-պարի դասընթացներին:

*
* *

**Հունիսի 14-ին, կիրակի.—Սկիզբն Յարութեան Կիրակէից: Յիշատակ Եղիայի մարգարէին.**

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Զատիկ աբղ. Ավետիքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում ընդհանրապես մարգարեների և հատկապես Եղիա մարգարեի կյանքի և գործունեության մասին:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

**Հունիսի 15-ին, երկուշաբթի.—Սրբոց կուսանացն Հռիփսիմեանց.**

Այսօր Ս. Հռիփսիմե վանքում, տոնի առիթով, ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Գարեգին քհն. Գասպարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Արիւն մարտիրոսաց հիմն Եկեղեցոյ» բնաբանով՝ շեշտելով Սուրբ Հռիփսիմյանց կույսերի նահատակության հոգևոր, հայրենասիրական նշանակությունը:

*
* *

**Հունիսի 16-ին, երեքշաբթի.—Սրբոց կուսանացն Գայիանեանց.**

Այսօր Ս. Գայանե վանքում ս. պատա-

բաց է մատուցում վանքի վանահայր Տ. Գուրգեն քհն. Աշուրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում օրվա տոնի առթիվ:

*
* *

**Հունիսի 17-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

**Հունիսի 18-ին, հինգշաբթի.—Տօն Սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին.**

Այսօր Ս. Շողակաթի եկեղեցում ս. պատարագ է մատուցում վանքի վանահայր Տ. Ղևոնդ քհն. Հարությունյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում օրվա տոնի առթիվ:

*
* *

**Հունիսի 20-ին, շաբաթ.—Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի Վիրապէն.**

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Նարեկ քհն. Մատարյանը:

*
* *

**Նույն օրը,** առավոտյան, Լոնդոնից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Մայր Աթոռի միաբան Տ. Հովնան աբդ. Տերտերյանը:

*
* *

**Հունիսի 21-ին, կիրակի.—Տօն կաթուղիկէ Ս. Էջմիածնի.**

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կատարած նախախնամական, փրկարար դերի մասին Հայ Եկեղեցու և ժողովրդի կյանքում, սկզբից մինչև մեր օրերը:

Այնուհետև կատարվում է մաղթանք Սրբո Էջմիածնի:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

**Հունիսի 24-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Տ. Հովնան աբդ. Տերտերյանը խոսում է Լոնդոնի հայ համայնքի եկեղեցական, ազգային, մշակութային կյանքի մասին:

*
* *

**Հունիսի 28-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Գարեգին քհն. Գասպարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եկեայք շինեսցուք զսուրբ Խորանն լուսոյ, բանգի ի սմա ծագեաց մեզ զլոյս ի Հայաստան աշխարհի» (Շարական) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: